ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. նոյեմբերի 19-22-ը

Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը

Հակոբ Ավագյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ), 2018թ. նոյեմբերի 19-22-ը

4. Հրավիրող կողմը

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն Փարիզում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպվող «Եվրասիական շաբաթ-2018» միջոցառումներին

6. Քննարկված թեմաները

- Քննարկվել է ՏՀԶԿ փորձագետների կողմից նոր մշակվող ՓՄՁ ռազմավարության մշակման ընթացիկ աշխատանքներին աջակցելու, ինչպես նաև ռազմավարության մոնիթորինգի հատվածը ստանձնելու հարցը:
- Քննարկվել է ՏՀԶԿ հետ ՓՄՁ վիճակագրության ուղղված ծրագրի իրականացմանն ուղղված քայլերը:
- Քննարկվել է Հայաստանի՝ ՏՀԶԿ ՕՈՒՆ (օտարերկրյա ուղղակի ներդրումներ) կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում ընդգրկվելու գործընթացը:
- Քննարկվել է ՏՀԶԿ կողմից իրականացվող Ներդրումային քաղաքականության ուսումնասիրությունների (Investment Policy Reviews) հնարավորությունը Հայաստանի համար:
- Քննարկվել են Ձեռնարկատիրական հաշտարարի ինստիտուտի ներդրման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը

Միջոցառման ընթացքում ներկայացվել են մի շարք երկրներում ՏՀԶԿ փորձագետների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները: Հետազոտությունների առանցքում մասնակից երկրներում ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված ռազմավարությունների, առանձին միջոցառումների, աջակցության ուղղությունների արդյունավետության բացահայտումն էր:

Մասնավորապես՝ ի թիվս այլ միջոցառումների՝ ներկայացվել է Վրաստանի 2016-2020թթ. ՓՄՁ զարգացման ռազմավարության մոնիթորինգի արդյունքներին վերաբերող զեկույց, Աֆղանստանի փորձագիտական գնահատման (peer review) վերաբերյալ զեկույցը, ինչպես նաև կայացել է «Տնտեսական ինտեգրում» թեմատիկ խորագրով նիստ:

Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների համար նախատեսված ճաշի ընթացքում համաժողովի մասնակիցներին ներկայացվել է Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները, երկրի ներդրումային միջավայրը, գործարար հնարավորությունները և ներդրումների համար առավել գրավիչ ոլորտները:

Մասնակից երկրների ներկայացուցիչները նաև փորձի փոխանակման հանդիպում-քննարկումներ են ունեցել:

Բացի օրակարգով նախատեսված միջոցառումներից՝ կայացել են հետևյալ առանձին երկկողմ հանդիպումները՝

- ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2018-ի նախօրեին հանդիպում է տեղի ունեցել ՏՀԶԿ Եվրասիայի վարչության ղեկավար Վիլիամ Թոմսոնի հետ: Քննարկվել են ծրագրի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները, ներկայիս իրավիճակը և հետագա համագործակցության հնարավորությունները և քայլերը, միջոցառման ընթացքում հնարավոր հանդիպումներ, քննարկումներ կազմակերպելու հնարավորությունները:
- Ս.թ. նոյեմբերի 19-ին կազմակերպվել է քննարկում ՏՀԶԿ և Գերմանիայի Միջազգային Համագործակցության Գործակալության փորձագետների հետ: Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ՏՀԶԿ փորձագետների կողմից նոր մշակվող ՓՄՁ ռազմավարության մշակման ընթացիկ աշխատանքներին աջակցելու, ինչպես նաև ռազմավարության մոնիթորինգի հատվածը ստանձնելու հարցում:
- Ս.թ. նոյեմբերի 20-ին կազմակերպվել է առանձին քննարկում ՏՀԶԿ

հաշտարարի ինստիտուտի ներդրման մասով ՏՀԶԿ աջակցության հնարավորությունը՝ հաշվի առնելով վերջինիս փորձը այդ հարցում տարբեր երկրներում, մասնավորապես Ուկրաինայում և Վրաստանում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՏՀԶԿ փորձագետների կողմից ուսումնասիրել Ձեռնարկատիրական հաշտարարի մասին օրենքի նախագիծը և ելնելով իրենց լավագույն փորձից՝ համապատասխան առաջարկներ ներկայացնելու, ինչպես նաև հետագայում Հաշտարարի ինստիտուտի կայացմանն աջակցելու հարցում:

- Ս.թ. նոյեմբերի 20-ին տեղի է ունեցել հանդիպում Ստեֆեն Թոմսենի՝ ՏՀԶԿ Ներդրումային բաժնի ղեկավարի և Ֆերնանդո Միստուրայի՝ ՏՀԶԿ Ներդրումային բաժնի քաղաքականության հետազոտողի հետ: Քննարկվել է Հայաստանի՝ ՏՀԶԿ ՕՈՒՆ (օտարերկրյա ուղղակի ներդրումներ) կարգավորումների սահմանափակման ինդեքսի (OECD FDI Regulatory Restrictiveness Index) վարկանիշում ընդգրկվելու գործընթացը: Հայկական պատվիրակության կողմից նշվել է, որ ներկայումս ընթանում է տեղեկատվության հավաքագրման փուլը, որն առաջիկայում կփոխանցվի ՏՀԶԿ՝ հետագա ուսումնասիրություններն իրականացնելու և Հայաստանի՝ ՏՀԶԿ կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում ընդգրկվելու գործընթացը ավարտին հասցնելու համար: Նախատեսված է աշխատանքներն ավարտին հասցնել 2019 թվականին:

  Միաժամանակ, քննարկվել է ՏՀԶԿ կողմից իրականացվող Ներդրումային քաղաքականության ուսումնասիրությունների (Investment Policy Reviews) հնարավորությունը: ՏՀԶԿ կողմից ներկայացվել է վերոնշյալ ուսումնասիրության իրականացման առավելությունները, պայմանները և ժամկետները: Հանդիպման ավարտին որոշվել է շարունակել համագործակցությունը ՏՀԶԿ հետ, մասնավորապես դիտարկել Ներդրումային քաղաքականության ուսումնասիրության հնարավորությունը Հայաստանի համար:

- ՏՀԶԿ «Եվրասիա մրցունակության ծրագրի» Ղեկավար կոմիտեի ընթացքում ներկայացվել է ՏՀԶԿ հետ համագործակցության արդյունքները և հետագա մի շարք նախաձեռնություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Այցի ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:
- Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՏՀԶԿ փորձագետների կողմից նոր մշակվող ՓՄՁ ռազմավարության մշակման ընթացիկ աշխատանքներին աջակցելու, ինչպես նաև ռազմավարության մոնիթորինգի հատվածը ստանձնելու հարցում:
- Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՏՀԶԿ փորձագետների կողմից ուսումնասիրել Ձեռնարկատիրական հաշտարարի մասին օրենքի նախագիծը և ելնելով իրենց լավագույն փորձից՝ համապատասխան առաջարկներ ներկայացնելու, ինչպես նաև հետագայում Հաշտարարի ինստիտուտի կայացմանն աջակցելու հարցում:
- Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՏՀԶԿ կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում ընդգրկվելու գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանցումն ավարտին հասցնել մինչև տարեվերջ:
- Քննարկվել է դիտարկել ՏՀԶԿ կողմից իրականացվող Ներդրումային քաղաքականության ուսումնասիրությունների (Investment Policy Reviews) իրականացման հնարավորությունը Հայաստանի համար:

9. Գործուղվողը՝

Հակոբ Ավագյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Հակոբ Ավագյան

27.11.2018թ.